# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 11*** — ***«10» նոյեմբերի 2021թ.***

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 115

## *ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 11 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողում գտնվող չոր և կիսաչոր ծառերը հատելու և համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնելու համար թույլտվություն տալու մասին:
4. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից պարզ գրավոր ձևով «Ուլար» համայնքային բնապահպանական հիմնադրամին վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:
5. «Ավտոպարկի և վարձակալական տարածքների կառուցում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ներդրում կատարելու մասին:
6. Գլաձորի համայնքապետարանի հաշվեկշռում առկա խողովակներից զոհվածների պանթեոնների շինարարական աշխատանքներում օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:
7. Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:
8. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | (ստորագրություն) | | |
| Գասպարյան Ք. | (ստորագրություն) | | |
| Գևորգյան Ա. | (ստորագրություն) | | |
| Լևոնյան Վ. | (ստորագրություն) | | |

| | | | |
|---|---|---|---|
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք


*Նիստ թիվ 11* «10» նոյեմբերի 2021թ.

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 116-Ն

## *ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 04-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պակասեցնել գործառնական դասակարգման՝

11.01.02 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից 39 600.0 /երեսունինը միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Ավելացնել եկամտային մասին՝

Բյուջեի հատված 1-ի /վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր/ հոդվածին 31 100.0 /երեսունմեկ միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ և նպատակաուղղել կապիտալ շինարարություն կատարելու համար:

3. Ավելացնել գործառնական դասակարգման՝

01.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածին 7 500.0 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

01.06.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածին 15 000.0 /տասնհինգ միլիոն/ ՀՀ դրամ, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին 200.0 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ և 4637 /դրամաշնորհներ/ հոդվածին 1 000.0 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ:

08.02.03 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածին 4 000.0 /չորս միլիոն/ ՀՀ դրամ:

04.05.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածին 11 900.0 /տասնմեկ միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | | [signature] | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

[stamp]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 11*** ***«10» նոյեմբերի 2021թ.***

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 117-Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՈՐ ԵՎ ԿԻՍԱՉՈՐ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջով և հիմք ընդունելով Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի դիմումները՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ թույլտվություն՝ Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող հողում գտնվող կիսաչոր ծիրանենին և 5 /հինգ/ ուռենիները, ինչպես նաև «Բալու կայա» կոչվող հանդամասում գտնվող չոր ուռենիները հատելու և համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ Հենրիկ Մարգարյանի, Սեյրան Սահակյանի, Պայծառ Իսկանդարյանի, Միեր Վարդանյանի և Սիրակ Գևորգյանի ընտանիքներին որպես վառելափայտ տրամադրելու համար:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 11*** *«10» նոյեմբերի 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 118

## *ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ ՊԱՐԶ ԳՐԱՎՈՐ ՁԵՎՈՎ «ՈՒԼԱՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշումը և «Ուլար» համայնքային բնապահպանական հիմնադրամի տնօրենի դիմումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից 118 հա, 3 (երեք) տարի ժամկետով, պարզ գրավոր ձևով «Ուլար» համայնքային բնապահպանական հիմնադրամին վարձակալության տրամադրելու համար:

2. 118 հա արոտավայրի 1 (մեկ) տարվա վարձավճարը սահմանել 44 250 (քառասունչորս հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 11*** *«10» նոյեմբերի 2021թ.*

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 119

### *«ԱՎՏՈՊԱՐԿԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 21-րդ և 42-րդ կետերի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ-ով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար Գլաձոր համայնքում «Ավտոպարկի և վարձակալական տարածքների կառուցում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարել ներդրում՝ 16 500 000 (տասնվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Թույլատրել Գլաձոր բնակավայրի մշակույթի տնից ապամոնտաժված դարպասը, 2 (երկու) մետաղապլաստե դռներն ու 6 (վեց) պատուհանները՝ որպես ներդրում օգտագործել «Ավտոպարկի և վարձակալական տարածքների կառուցում» դրամաշնորհային ծրագրով իրականացվող շինարարական աշխատանքներում:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փողոց, 41 շենք

***Նիստ թիվ 11*** *«10» նոյեմբերի 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 120

## *ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻՑ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՊԱՆԹԵՈՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել Գլաձոր համայնքի հաշվեկշռում առկա 3 (երեք) դյույմ տրամագծով երկարթյա խողովակից 18 մետր օգտագործել Արցախյան 44-օրյա պատերազմում Գլաձոր համայնքից զոհված զինծառայողների պանթեոնների շինարարական աշխատանքներում՝ որպես լուսավորության հենասյուներ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Է. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 11*** *«10» նոյեմբերի 2021թ.*

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 121

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը՝ համաձայն որի Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 700-Ն որոշման համաձայն Գլաձոր համայնքին հատկացված գումարով ձեռք բերված 3 (երեք) հատ «Զենիթ Տուրբո» հակակարկտային կայանքները, ընդհանուր 5 700 000 (հինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ արժողությամբ, հաշվառվել են Գլաձոր համայնքի գույքային հաշվեկշռում:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 11*** *«10» նոյեմբերի 2021թ.*

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 122-Ա

## *ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, քննարկելով Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչներ Աշոտ Կարապետյանի և Լյուդմիլա Գրիգորյանի կողմից ներկայացված դիմումը, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի պահանջը, Գլաձոր համայնքի ավագանու «Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի» մշտական հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 10-ի դրական եզրակացությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն կամավոր խնդրի լուծման իրականացմանը և Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից հատկացնել ֆինանսական օգնություն /հատկացում/.

1) սոցիալապես անապահով վիճակում գտնվող, առողջական խնդիրներ, նոր ծնված երեխաներ ունեցող բնակիչներին՝ համաձայն սույն որոշման հավելվածի,

2) Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի ոռոգման մայր առվի վրա կառուցված կամրջի վերակառուցման համար՝ Գետափ բնակավայրի բնակիչներ Աշոտ Կարապետյանին և Լյուդմիլա Գրիգորյանին 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2021 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 122-Ա որոշման

# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 10.07.01 ԲԱԺՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 4729 /ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ/ ՀՈԴՎԱԾԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

**1. Սոցիալապես անապահով վիճակում գտնվող և առողջական խնդիրներ ունեցող բնակիչներ՝**

1) Քնարիկ Միսակի Մարգարյան՝ Գետափ բնակավայր –30 000 / երեսուն հազար/ ՀՀ դրամ
2) Վերա Կարապետի Մարգարայն՝ Գլաձոր բնակավայր –25 000 /քսանիհմգ հազար/ ՀՀ դրամ
3) Գարիկ Սերգեյի Ուգարյով՝ Գլաձոր բնակավայր –100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ
4) Համիկ Հայրիկի Բադալյան ՝ Գլաձոր բնակավայր – 25 000 / քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
5) Վարսենիկ Հրանտի Կարապետյան՝ Վերնաշեն բնակավայր –30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
6) Քնարիկ Հուսիկի Հարությունյան՝ Գետափ բնակավայր-15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
7) Էլմիրա Ռոբերտի Սարգսյան՝ Գլաձոր բնակավայր –30 000 / երեսուն հազար/ ՀՀ դրամ
8) Անդրանիկ Մանվելի Ավագյան՝ Գլաձոր բնակավայր –30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
9) Ռուստամ Հենրիկի Նազարյան՝ Գլաձոր բնակավայր –30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
10) Շուշիկ Ռուբիկի Խանամիրյան՝ Գլաձոր բնակավայր –20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ
11) Լուսինե Վարազդատի Բաղդասարյան՝ Գլաձոր բնակավայր –10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
12) Ալինա Համլետի Աբրահամյան՝ Գլաձոր բնակավայր –30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

**2. Համայնքում նոր ծնված երեխաներ ունեցող ընտանիքներին՝**

1) Աննա Արարատի Հախվերդյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
2) Գարիկ Ջալիկի Կարապետյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
3) Տիգրան Մխիթարի Սարգսյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
4) Դիաննա Մուկուչի Մկրտչյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
5) Արման Յաշայի Ասրյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
6) Արմինե Գալուստի Ասրյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
7) Գևորգ Սերգեյի Ուգարով՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
8) Քաջիկ Ազատի Հովհաննիսյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
9) Համիկ Հրանտի Համբարձումյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
10) Ատոմ Ջարմիկի Հովսեփյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
11) Արտյոմ Ռուդիկի Ալոյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
12) Արսեն Մովսեսի Ասատրյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
13) Վարդան Վահանի Խաչատրյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
14) Քրիստինե Արթուրի Ջաքարյան՝ Գլաձոր բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
15) Հմայակ Սպարտակի Գրիգորյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
16) Ռաֆիկ Միերի Ալոյան՝ Գետափ բնակավայր – 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

**Ընդամենը - 775 000 /յոթ հարյուր յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:**

**Համայնքի ղեկավար** **Ա. Մովսիսյան**